TUMO
CENTER FOR CREATIVE TECHNOLOGIES

#TUMO4Artsakh**Teens**

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՌՈՂՋԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության՝ աշխատանքի որոնման «Գտի՛ր աշխատանք» հարթակում առկա է շուրջ 4 000 թափուր աշխատատեղ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնում են, որ հարթակում հավաքագրված են Երևանում և մարզերում առկա այն թափուր հաստիքները, որոնք գործատուները ներկայացրել են Միասնական սոցիալական ծառայություն:

Առկա թափուր հաստիքներին ծանոթանալու համար՝ https://bit.ly/4aOknIr

Կառավարությունը կաջակցի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ձեռք բերել ինչպես մասնագիտական հմտություններ և կարողություններ, այնպես էլ աշխատանքային փորձ և աշխատանք: Զբաղվածության ծրագրից օգտվելու համար պետք է պարզապես դիմել Միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:

Ծրագրի շրջանակում առաջարկվում է 3 հնարավորություն.

- **Հնարավորություն 1.** «Մասնագիտական ուսուցում և աշխատանքի տեղավորում»,
- **Հնարավորություն 2.** «Աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում»,
- **Հնարավորություն 3.** «Մասնագիտական ուսուցում, վճարվող աշխատանքային պրակտիկա և աշխատանքի տեղավորում»:

Ովքե՞ր կարող են դիմել

Ծրագրի շահառու կարող են դառնալ միայն 2023թ.-ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, 16-ից 63 տարեկան անձինք:

Դիմելու կարգ

Ծրագրից օգտվելու համար շահառուները պետք է դիմեն Միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:

Մանրամասներին ծանոթանալու համար՝ https://socservice.am/offices

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

E-WORK.AM

«e-work.am»-ը աշխատանքի պրոֆեսիոնալ հարթակը Ձեզ հնարավորություն կտա գտնել աշխատանք և աշխատակից, դիմել աշխատանքային պրակտիկա և կամավորական աշխատանք առաջարկող գործատուներին՝ արձագանքելով հրապարակված հայտարարություններին, հրապարակել աշխատանքի, աշխատանքային պրակտիկայի և կամավոր աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ, առցանց եղանակով դիմել պետական զբաղվածության ոլորտում իրականացվող զբաղվածության ծրագրերին:

Մանրամասներին ծանոթանալու՝ https://bit.ly/3AEu2EH

TUMO STUDIOS

Թումո ստուդիաները իրականացնում է բռնի տեղահանված արցախցի արհեստագործների տվյալների հավաքագրում՝ համագործակցությունների նպատակով:
Մենք փնտրում ենք դերձակների, հելունով կամ շյուղերով գործող անձանց, ասեղնագործության վարպետների, գորգագործների, խեցեգործների, զարդագործների, փայտի և քարի հետ աշխատող վարպետների:
Անհրաժեշտության դեպքում Թումո ստուդիաները կիրականացնի մասնագիտական վերապատրաստման անվճար դասընթացներ՝ ընտրված վարպետների համար:

Մանրամասներին ծանոթանալու և դիմելու համար՝ https://forms.gle/FYBXK6GYXzANA1G87
Կապ հաստատելու համար զանգահարեք՝ **+374 11 203 088**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

IMPACT HUB

Իմփաքթ Հաբը հրավիրում է ԼՂՀ-ից բոլոր իրավասու ՓՄՁ-ներին և բիզնեսի սեփականատերերին դիմել և օգտվել Հայաստանում Ձեր բիզնեսները վերաբացելու և զարգացնելու այս հնարավորությունից: Ծրագրին մասնակցելու համար դիմորդները պետք է բավարարեն հետևյալ չափանիշներին՝

- Տրամադրել Արցախում նախկինում բիզնեսի առկայության ապացույց:
- Ունենալ հստակ բիզնես պլան՝ վերաբացման ռազմավարություններով:
- Ցուցադրել պատրաստակամություն՝ հարմարեցնելու իրենց բիզնեսը և ինտեգրվելու ներկայիս համայնքում/տարածաշրջանում:
- Հետաքրքրություն բիզնեսը թվայնացնելու հարցում:
- Տեղական տնտեսությանը և համայնքի զարգացմանը նպաստելու պատրաստակամություն:
- Ծրագրին ակտիվ մասնակցության պատրաստակամություն:

«Թվային հզորացում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ձեռնարկությունների համար» ծրագրի նպատակն է աջակցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված գործարարներին, որոնք նպատակ ունեն վերսկսել իրենց բիզնեսը Հայաստանում:

Դիմելու համար լրացրեք հայտադիմումը՝ https://bit.ly/41N9wgd